ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 320
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
Երևան քաղաքի Թևոսյան փողոց N 1, N 1/2, N 1/4 հասցեներում գտնվող 01-008-0405-0116, 01-008-0405-0115, 01-008-0405-0114 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.939485 հա, 0.886428 հա, 0.301587 հա մակերեսներով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր	Երևան քաղաքի Թևոսյան փողոց N 1, N 1/2, N 1/4 հասցեներում գտնվող 01-008-0405-0116, 01-008-0405-0115, 01-008-0405-0114 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.939485 հա, 0.886428 հա, 0.301587 հա մակերեսներով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների կողմից նշված պայմանները (կցվում է):

4. Երևանի քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ Երևան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «26» «սեպտեմբերի» 2023 թ.